



«Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 59 59 99
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս համախմբված գործունեության արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է համբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելի անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել հումբը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել համբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճանն է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումներ՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ համբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել համբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել համբի կողմից

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար.

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
8 ապրիլի 2019թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	4,169,329	4,423,459
Ոչ նյութական ակտիվներ և գույքիլ	12	1,565,113	1,597,041
Տրամադրված փոխառություններ	13	226,736	243,936
Հետաձգված հարկային ակտիվներ	10	99,308	96,250
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		10,432	10,432
Ոչ ընթացիկ ակտիվներ		6,070,918	6,371,118
Պաշարներ		10,463	11,622
Տրամադրված փոխառություններ	13	9,987,063	7,662,065
Ընթացիկ հարկային ակտիվներ		3,080	17,837
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	198,429	142,306
Բանկային ավանդներ	15	935,850	480,631
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	353,772	561,046
Ընթացիկ ակտիվներ		11,488,657	8,875,507
Ընդամենը ակտիվներ		17,559,575	15,246,625
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		13,190,000	10,910,000
Կապիտալի բաշխում		(1,081,481)	(696,694)
Զբաղիված շահույթ		2,968,443	1,290,763
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ		15,076,962	11,504,069
Զվերահսկվող բաժնեմասեր		55,658	54,538
Ընդամենը սեփական կապիտալ	17	15,132,620	11,558,607
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	1,415,453	2,781,155
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	778,072	815,618
Ոչ ընթացիկ պարտավորություններ		2,193,525	3,596,773
Վարկեր և փոխառություններ	19	20,156	8,046
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		70,044	52,420
Ընթացիկ հարկային պարտավորություններ		143,230	30,779
Ընթացիկ պարտավորություններ		233,430	91,245
Ընդամենը պարտավորություններ		2,426,955	3,688,018
Total equity and liabilities		17,559,575	15,246,625

հազ. դրամ	Note	2018	2017*
Հասույթ	6	2,074,281	1,582,066
Վաճառքի ինքնարժեք	7	(547,554)	(536,529)
Համախառն շահույթ		1,526,727	1,045,537
Այլ եկամուտ		7,406	5,708
Վարչական ծախսեր	8	(199,246)	(177,040)
Այլ ծախսեր		(19,533)	(10,215)
Գործառնական գործունեության արդյունքներ		1,315,354	863,990
Ֆինանսական եկամուտ	9	969,412	638,958
Ֆինանսական ծախսեր	9	(188,012)	(279,685)
Զուտ ֆինանսական եկամուտ		781,400	359,273
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		2,096,754	1,223,263
Շահութահարկի գծով ծախս	10	(417,954)	(251,999)
Շահույթ և այլ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		1,678,800	971,264
Շահույթ և այլ ֆինանսական արդյունք վերագրելի՝			
Ընկերության սեփականատերերին		1,677,680	971,313
Չվերահսկող բաժնեմասերին		1,120	(49)
		1,678,800	971,264

* Խումբը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Այս ստանդարտներին անցման ընտրված մեթոդների համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (տես՝ Ծանոթագրություն 5):

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. ապրիլի 8-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արմեն Պետրոսյան
Գլխավոր տնօրեն

Շավարշ Հայրապետյան
Ֆինանսական տնօրեն



հազ. դրամ	Ընկերության սեփականատերերին վերագրելի					Ընդամենը սեփական կապիտալ
	Բաժնետիրական կապիտալ	Կապիտալի բաշխում	Չբաշխված շահույթ	Ընդամենը	Չվերահսկող բաժնեմասեր	
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ*	8,700,000	(462,480)	319,450	8,556,970	54,587	8,611,557
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ/(վնաս) տարվա համար	-	-	971,313	971,313	(49)	971,264
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	971,313	971,313	(49)	971,264
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ						
Սովորական բաժնետոմսերի թողարկում	2,210,000	-	-	2,210,000	-	2,210,000
Այլ բաշխումներ	-	(234,214)	-	(234,214)	-	(234,214)
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	2,210,000	(234,214)	-	1,975,786	-	1,975,786
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,910,000	(696,694)	1,290,763	11,504,069	54,538	11,558,607
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	10,910,000	(696,694)	1,290,763	11,504,069	54,538	11,558,607
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ տարվա համար	-	-	1,677,680	1,677,680	1,120	1,678,800
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,677,680	1,677,680	1,120	1,678,800
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ						
Սովորական բաժնետոմսերի թողարկում	2,280,000	-	-	2,280,000	-	2,280,000
Այլ բաշխումներ	-	(384,787)	-	(384,787)	-	(384,787)
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	2,280,000	(384,787)	-	1,895,213	-	1,895,213
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,190,000	(1,081,481)	2,964,843	15,076,962	55,658	15,132,620

* Խումբը սկսել է կիրառել ՖՀՄՄ 15-ը և ՖՀՄՄ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Այս ստանդարտներին անցման ընտրված մեթոդների համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (տես՝ Ծանոթագրություն 5):

հազ. դրամ	2018թ.	2017թ.*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Շահույթ	1,675,200	971,264
<i>Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.</i>		
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստ	41,182	-
Մաշվածություն և անորտիզացիա	375,038	368,977
Վնաս հիմնական միջոցների օտարումից	-	174
Ջուտ ֆինանսական եկամուտ	(822,582)	(359,273)
Շահութահարկի գծով ծախս	421,554	251,999
<i>Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.</i>		
Պաշարներ	1,159	(1,631)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(56,123)	(22,638)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	36,364	16,136
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	1,668,192	1,225,008
Վճարված շահութահարկ	(235,153)	(323,113)
Վճարված տոկոսներ	(147,582)	(283,252)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	1,285,457	618,643
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(17,292)	(374,115)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(95,148)	-
Տրամադրված փոխառություններ	(9,013,300)	(2,130,629)
Տրամադրված փոխառությունների մարում	6,930,942	939,942
Ստացված տոկոսներ	232,922	369,190
Բանկային ավանդների տեղաբաշխում	(935,000)	(700,000)
Մուտքեր բանկային ավանդներից	480,000	220,000
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(2,416,876)	(1,675,612)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	2,280,000	2,210,000
Մուտքեր վարկերից և փոխառություններից	2,061,359	-
Վարկերի և փոխառությունների մարում	(3,413,817)	(849,153)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	927,542	1,360,847
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ած	(203,877)	303,877
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	561,046	261,979
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,397)	(4,810)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	353,772	561,046